



**«Կառավարության ֆինանսների կառավարման  
տեղեկատվական համակարգի» ներդրման ծրագրի  
ՓՈՒԼ 2.2-ի Հաշվետվություն**

**ԿՖԿՏՀ ներդրման մոդել  
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ և ԲՅՈՒՋԵԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐ**

## Բովանդակություն

Հապավումներ	3
Ներածություն	4
1. Ուսումնասիրության ամփոփում	4
1.1 Եզրակացություն	6
2. Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների կառուցվածք	7
2.1 Պետական Պարտքի մոդուլ	8
2.1.1 Պարտքի կառավարման ենթամոդուլ	9
2.1.2 Աճուրդի ենթամոդուլ	10
2.1.3 Մանրածախ վաճառքի ենթամոդուլ	10
2.1.4 Գործակալների ռեեստր	11
2.2 Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ	11
2.2.1 Մուրհակներ ենթամոդուլ	12
2.2.2 Վարկեր և պարտքեր ենթամոդուլ	12
2.2.3 Բյուջետային երաշխիքներ ենթամոդուլ	12
2.3 Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ	13
2.4 Փոխանակվող տվյալներ	13
3. Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ֆունկցիոնալ նկարագրություն	17
3.1 Անալիտիկ գործառույթներ	17
3.2 Պարտքի ներգրավում	18
Փուլ 1 – Պարտքային գործիքների ձևավորում	19
Փուլ 2 – Փոխառու միջոցների ներգրավում	24
Պարտատոմսեր	24
Վարկեր	31
Փուլ 3 – Մարում և սպասարկում	34
3.3 Առաջնային գործակալների վարքագծի գնահատում	36
3.4 Հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրում	39
3.5 Վարկերի, ենթավարկերի տրամադրում և բյուջեի նկատմամբ պարտքի կառավարում	41
3.6 Բյուջետային երաշխիքների տրամադրում	43
Հավելված 1. ՊՊԿԿ գործառույթներ	45
Հավելված 2. ՊԲՆՊԿԿ գործառույթներ	48

## Հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՖՆ	Ֆինանսների Նախարարություն
ԿՖԿՏՀ	Կառավարության Ֆինանսների Կառավարման Տեղեկատվական Համակարգ
ՊՊԿՎ	Պետական Պարտքի Կառավարման Վարչություն
ԿԲ	Կենտրոնական Բանկ
ՊԳՊ	Պետական Գանձապետական Պարտատոմսեր
ԽԱՊ	Խնայողական Արժեկտրոնային Պարտատոմսեր
ՊԿՊ	Պետական Կարճաժամկետ Պարտատոմսեր
ՄԺՊ	Միջնաժամկետ Պարտատոմսեր
ԵԺՊ	Երկարաժամկետ Պարտատոմսեր
ԳՊԱԿ	Գանձապետական պահառուի աշխատանքների կազմակերպման բաժին
ԳՄՀ	Գանձապետական Միասնական Հաշիվ
ՊԲՆՊԿՎ	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ կառավարման վարչություն
ԲՆՊԿ մոդուլ	Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման Մոդուլ

## Ներածություն

Սույն փաստաթղթում ներկայացված է ՀՀ Ֆինանսների Նախարարության (ՖՆ) Պետական Պարտքի Կառավարման Վարչությունում (ՊՊԿՎ) և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունում իրականացվող տարբեր բնույթի գործառնությունների ուսումնասիրության ամփոփումը, դրանց հիման վրա տրված եզրակացությունները, ինչպես նաև Կառավարության Ֆինանսների Կառավարման Տեղեկատվական Համակարգի (ԿՖԿՏՀ) շրջանակում Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման (ԲՆՊԿ) մոդուլներում ներդրման համար առաջարկվող ֆունկցիոնալ և կառուցվածքային տարբերակներ:

Առաջարկվող տարբերակները հիմք կհանդիսանան հետագայում ԿՖԿՏՀ տեխնիկական առաջադրանքը (տվյալ պարագայում՝ Պետական Պարտքի մոդուլի մասով) մշակելու համար: Դրանք ստեղծվել են առկա գործընթացների ուսումնասիրության, ինչպես նաև ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության աշխատակիցների հետ քննարկումների արդյունքում:

Փաստաթուղթը կազմված է հետևյալ բաժիններից.

- **Ուսումնասիրության ամփոփում** – ամփոփված են ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության գործառնությունները, ինչպես նաև ներկայացված է ընդհանուր եզրակացություն:
- **Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների կառուցվածք** – ներկայացված են Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների կառուցվածքային սխեմաներ՝ ԿՖԿՏՀ համատեքստում, ներքին կոմպոնենտներ (ենթամոդուլներ), դրանց փոխհարաբերությունը միմյանց և արտաքին կոմպոնենտների հետ:
- **Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ֆունկցիոնալ նկարագրություն** – նկարագրված են Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների միջոցով իրականացվող օպտիմալ գործառնությունները:

## 1. Ուսումնասիրության ամփոփում

ԿՖԿՏՀ շրջանակում Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ներդրումը պետք է բավարարի ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության գործառնություններին, ուստի ուսումնասիրվել են.

- ՊՊԿՎ-ում և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունում առկա գործընթացները<sup>1</sup> և դրանցում ներգրավված դերակատարները,
- գործընթացների իրականացման գործիքակազմը և դրանց գործունեության տիրույթներն (ՖՆ ՊՊԿՎ, Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն, այլ ստորաբաժանումներ, ԿԲ և այլն) ու պատկանելիությունը:

ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության աշխատակիցների հետ մշակվել է վարչությունների գործառույթների դասակարգված ցանկը (Հավելված 1): Ցանկում գործառույթները խմբավորված են բազմաստիճան ըստ բնույթի: Այսպիսի դասակարգումը թույլ կտա խմբավորել նույնաբնույթ գործընթացները (որոնց պահանջը ԿՖԿՏՀ Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլներից նմանատիպ է կամ նույնն է)՝ Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների հակիրճ ֆունկցիոնալ նկարագրության համար՝ ներկայացնելով գործընթացի կարգը ոչ թե ամեն մի գործառույթի համար, այլ՝ դրանց խմբի: Սա հնարավորություն կտա նաև խմբավորել տարաբնույթ գործընթացներն առանձին ենթամոդուլներում:

Հավելված 1-ում ներկայացված գործառույթներն՝ ըստ բնույթի, խմբավորվել են հետևյալ կերպ.

- **Անալիտիկ գործառույթներ**, որոնք ներառում են.
  - 1.1 Ռազմավարության մշակում (չներառելով «1.1.2 ՄԺԾԾ հայտեր» և 1.1.3 «Տարեկան բյուջետային հայտեր» գործառույթները. դրանք նկարագրվում են «Բյուջետավորում» մոդուլում)
  - 2.1 Կանխիկ հոսքերի կանխատեսում
  - 1.4 Վիճակագրություն և հաշվետվություն
- **Պարտքի ներգրավում և մարում**, որը ներառում է.
  - 1.2 Ռազմավարության իրականացում (չներառելով 1.2.2.3 Առաջնային գործակալների վարքագծի գնահատում, որն այլ բնույթի գործառույթ է և ներկայացվում է առանձին կետով)
  - 1.3 Պարտքի հաշվառում և սպասարկում
- **Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության զծով ստանձնած պարտավորությունների կատարում (3.2)**
- **Առաջնային գործակալների վարքագծի գնահատում (1.2.2.3):**

Խմբավորումից դուրս է թողնված ՊՊԿՎ-ում իրականացվող «3.1 ՀՀ հանդեպ ոչ ռեզիդենտների (Վրաստանի) պարտքի սպասարկում» գործընթացը, որը բնութագրվում է Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության բյուջետային վարկերի տրամադրման արդյունքում ձևավորված

<sup>1</sup> Առկա գործընթացները նկարագրությունը բերված է Պ1-Պ29 և Գ2-ՊԿՎ1—Գ2-ՊԿՎ6 փաստաթղթերում:

պարտքի կառավարման գործառնություն: Խմբավորումից դուրս է թողնված նաև ՊԲՆՊԿ վարչության բարեգործական ծրագրեր որակելու վերաբերյալ կարծիքների ներկայացում և ՀՀ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրամադրված ապրանքային և ոչ ապրանքային դրամաշնորհների հաշվառում գործառնությունները, որոնք ԿՖԿՏՀ համատեքստում էլեկտրոնային համակարգերից դուրս իրականացվող գործառնություններ են: Իսկ Կանխիկ հոսքերի կառավարման օպտիմալ գործընթացները կներկայացվեն Գանձապետարան մոդուլի շրջանակներում:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ՊՊԿՎ և ՊԲՆՊԿՎ-ում չկան ներդրված որևէ էլեկտրոնային համակարգեր, որոնք թույլ կտային միասնական կառավարել վերը նշված գործընթացները: Կիրառվում են տարբեր էլեկտրոնային համակարգեր (հիմնականում ոչ ՖՆ-ին պատկանող), իսկ մշակվող տեղեկատվությունը պահպանվում է առանձին ֆայլերում՝ առանձին աշխատակիցների համակարգիչներում: Որպես հիմնական գործիք՝ շատ գործընթացներում կիրառվում է MS Excel ծրագրային ապահովումը:

## 1.1 Եզրակացություն

Տարբեր գործընթացներում (և/կամ դրանց տարբեր քայլերում) տարբեր գործիքների կիրառությունը բերում է գործընթացների ոչ օպտիմալ կազմակերպման, ինչպես նաև տվյալների ոչ կենտրոնացված մշակման: Սրանք էլ, իրենց հերթին, կարող են առաջացնել աշխատանքային գործընթացների խափանումներ, զգայուն տվյալների ոչ անվտանգ կիրառություն, տվյալների անհամատեղելիություն և այլն:

Գործընթացների համակարգման և օպտիմալացման համար կարևոր է ԿՖԿՏՀ Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների (որպես ավտոնոմ էլեկտրոնային համակարգեր) ներդրումը, որը թույլ կտա.


- Հնարավորինս կենտրոնացնել գործընթացների իրականացումը մեկ էլեկտրոնային համակարգի տիրույթում,
- Մշակել և պահպանել տվյալները՝ կենտրոնացված կարգով,
- Փոխգործակցել այլ մոդուլների և արտաքին համակարգերի հետ՝ վերակիրառելով վերջիններում մշակվող տվյալները
- Կառավարել գործընթացների հաջորդականությունն ու կարգը,
- Սահմանել համապատասխան գործարկողների լիազորություններ՝ տվյալների և գործընթացների նկատմամբ:

## 2. Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների կառուցվածք

Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլների ներդրումը պետք է իրականացնել հետևյալ սկզբունքներով.

- Հնարավորինս թույլ կախվածություն արտաքին համակարգերից, փոխգործելիության ապահովում արտաքին համակարգերի՝ ՀՀ ԿԲ-ի, Դեպոզիտարիայի և պետական վճարումների էլեկտրոնային E-payments համակարգի, ինչպես նաև մյուս մոդուլների՝ Գանձապետական, Բյուջետավորման, Անալիտիկ-Հաշվետվողական, Հանրային Հատվածի Հաշվապահություն մոդուլների հետ:
- Հնարավորինս տվյալների վերակիրառություն: Այն տվյալները, որոնք մշակվում են ԿՖԿՏՀ մյուս մոդուլներում կամ արտաքին համակարգերում, պետք է վերակիրառել՝ խուսափելով կրկնակի մշակումից
- Հնարավորինս պարզ և բավարար ֆունկցիոնալություն՝ մեկ մոդուլի տիրույթում աշխատելու համար:


Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ներդրման առաջարկվող կառուցվածքը բերված է նկար 2.1-ում:





Նկար 2.1 Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների առաջարկվող կառուցվածք:

Առաջարկվող կառուցվածքի տվյալների հոսքը ներկայացված է նկար 2.2-ում.



Նկար 2.2 Առաջարկվող կառուցվածքի տվյալների հոսք:

Հաջորդիվ ներկայացվում է առանձին մոդուլների և ենթամոդուլների նշանակությունը, ինչպես նաև կապը մյուս արտաքին և ներքին կոմպոնենտների (մոդուլ/ենթամոդուլների) հետ: Մոդուլների կիրառմամբ իրականացվող գործառնությունների ֆունկցիոնալ նկարագրությունը բերված է հաջորդ գլխում:

## 2.1 Պետական Պարտքի մոդուլ

Պետական պարտքի մոդուլը նախատեսված է պետական պարտքի կառավարման (ներգրավման, մարման և սպասարկման), պետական պարտատոմսերի աճուրդի կազմակերպման, էլեկտրոնային վաճառքի, առաջնային և երկրորդային գործակալների ռեեստրի վարման համար:

Պետական պարտքի մոդուլը ներառում է պարտքի կառավարման, աճուրդի, մանրաձախ վաճառքի և գործակալների ռեեստրի ենթամոդուլները: Ստորև ներկայացված է յուրաքանչյուր մոդուլի նկարագրությունը, ինչպես նաև յուրաքանչյուր ենթամոդուլի շրջանակում մշակվող և այլ ենթամոդուլներից ու արտաքին համակարգերից տրամադրվող տվյալների հոսքերը:



### 2.1.1 Պարտքի կառավարման ենթամոդուլ

Այս ենթամոդուլը նախատեսվում է ներդնել՝ ապահովելու համար «Պարտքի ներգրավում և մարում» խմբում ընդգրկված գործառնությունների, ինչպես նաև «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարում» գործառնության ավտոմատացումը: Պարտքի ներգրավումը տեղի է ունենում համաձայն բյուջետավորման մոդուլից ստացվող բյուջեի դեֆիցիտի լրացման Բ3 և բյուջեի ծախսերի ու ելքերի վերաբերյալ Բ1 տվյալների (տվյալների մշակման գործընթացը մանրամասն նկարագրված է «ԿՖԿՏՀ ներդրման մոդել. Բյուջետավորման մոդուլ» փաստաթղթում): Իսկ Պարտքի կառավարման ենթամոդուլը Բյուջետավորման մոդուլին է տրամադրում ՊՊ1 տվյալը՝ ներգրավվող միջոցների, դրանց մարումների և սպասարկումների վերաբերյալ:

Ենթամոդուլը տվյալների փոխանակում է իրականացնում Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի հետ (ՊՊ9.1)՝ տրամադրելով Պարքային գործիքի ձևավորման համար ներկայացված վերլուծական տվյալներ (նախնական կանխատեսումներ և/կամ ժամանակագրություն), որոնք մշակվում են ենթամոդուլի շրջանակում, և ստանալով այլ անալիտիկ տվյալներ, որոնք մշակվում են ԿՖԿՏՀ բոլոր մոդուլների կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Օրինակ՝ Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը ենթամոդուլի կողմից կարող է կիրառվել պարտքային գործիքների ձևավորման փուլում անհրաժեշտ վերլուծական տվյալներ՝ նախնական կանխատեսումներ և/կամ ժամանակագրություն ստանալու համար (ԱՀ5.2):

Պետական գանձապետական պարտատոմսերի աճուրդին և էլեկտրոնային վաճառքին վերաբերող տվյալները (ՊՊ3) ենթամոդուլը ստանում է համապատասխանաբար «Աճուրդ» և «Մանրածախ վաճառք» ենթամոդուլներից և այդ ենթամոդուլներին է տրամադրում պարտքային գործիքի տվյալները (ՊՊ4):

Ենթամոդուլը ինտեգրվում է նաև ԿԲ-ի և Դեպոզիտարիայի հետ՝ տվյալների փոխանակման համար՝ տրամադրելով ՊՊ7.1 տվյալը՝ ԱՄՏԾ-ի (ISIN կոդ) շնորհման հայտը և ՊՊ7.2 տվյալը՝ գրանցվող պետական պարտատոմսի տվյալները և այստեղից ստանում է ԴԵՊ1 և ԿԲ2 տվյալները՝ համապատասխանաբար ԱՄՏԾ-ի (ISIN կոդի) և գրանցված պարտատոմսերի վերաբերյալ տվյալները:

Պարտքի կառավարման ենթամոդուլը ինտեգրվում է նաև Հանրային հատվածի հաշվապահության մոդուլի հետ՝ տրամադրելով ՊՊ2.1 տվյալը՝ Պարտքային գործիքների պայմանագրերը (հավելված, ժամանակացույց, և այլն) և ուղղակի վճարումների վերաբերյալ ՊՊ2.2 տվյալը:

Իսկ Գանձապետական մոդուլից Պարտքի կառավարման ենթամոդուլը ստանում է պարտքային գործիքների գանձապետական մուտքերի/ելքերի վերաբերյալ տվյալները (ԳԶ4):

Պարտքի կառավարման ենթամոդուլը պետք է ապահովի նաև պարտքի գրանցման, ժամանակացույցերի վարման և նմանատիպ այդպիսի ֆունկցիոնալ հնարավորություն:

## 2.1.2 Աճուրդի ենթամոդուլ

Այս ենթամոդուլը նախատեսվում է ներդնել՝ ապահովելու համար պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) աճուրդների կազմակերպումը, իրականացումը, գրանցումը՝ Պետական Պարտքի մոդուլի շրջանակում: Պետք է ապահովի պետական պարտատոմսերի (ՊԿՊ, ՄԺՊ, ԵԺՊ) աճուրդով ձեռքբերումը՝ առաջնային գործակալների կողմից:

Աճուրդի գործընթացում առաջնային գործակալների վերաբերյալ տեղեկատվությունը, նրանց՝ աճուրդին մասնակցելու թույլտվությունները, և նմանատիպ այլ տեղեկատվություն (ՊՊ5), ենթամոդուլը ստանում է «Գործակալների ռեեստր» ենթամոդուլից:

Աճուրդի ենթամոդուլը Պարտքի կառավարման ենթամոդուլին է տրամադրում աճուրդի արդյունքային տվյալները (ՊՊ3.1) և ստանում է պարտքային գործիքի տվյալները (ՊՊ4):

Աճուրդի ենթամոդուլը նույնպես տվյալների փոխանակում է իրականացնում Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի հետ՝ տրամադրելով տվյալներ (ՊՊ9.2), որոնք մշակվում են աճուրդների ընթացքում և ստանալով անալիտիկ տվյալներ Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլից (ԱՀ5.1):

## 2.1.3 Մանրածախ վաճառքի ենթամոդուլ

Այս ենթամոդուլը նախատեսվում է ներդնել՝ ապահովելու համար բոլոր տեսակի պարտատոմսերի (ԽԱՊ, ՊԿՊ, ՊՄՊ, ՊԵՊ) էլեկտրոնային վաճառքի (մանրածախ) կազմակերպումը, իրականացումը, գրանցումը՝ Պետական Պարտքի մոդուլի շրջանակում: Այն պետք է ապահովի նշված պարտատոմսերի օնլայն ձեռքբերումը քաղաքացիների<sup>2</sup> կողմից:

Այդ նպատակով ենթամոդուլը պետք է ինտեգրվի պետական վճարումների էլեկտրոնային E-payments համակարգի հետ՝ տրամադրելով պարտատոմսերի գնման համար անհրաժեշտ տվյալներ (ՊՊ8)՝ էլեկտրոնային վաճառքը իրականացնելու համար:

Մանրածախ վաճառքի ենթամոդուլը Պարտքի կառավարման ենթամոդուլից ստանում է պարտքային գործիքի տվյալները (ՊՊ4) և տրամադրում՝ էլեկտրոնային վաճառքի արդյունքային տվյալները (ՊՊ3.2): Աճուրդի ենթամոդուլից ստանում է աճուրդի արդյունքային տվյալներ (ՊՊ10), որի հիման վրա պետք է իրականացնի Պետական Պարտատոմսերի (ոչ ԽԱՊ) մանրածախ վաճառքը:

Մանրածախ վաճառքի ենթամոդուլը նույնպես տվյալների փոխանակում է իրականացնում Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի հետ՝ տրամադրելով տվյալներ

---

<sup>2</sup> Պարտատոմսերի օնլայն ձեռքբերումը հնարավոր է իրականացնել ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար: Յուրաքանչյուրի ձեռքբերման ընթացքի մանրամասն նկարագրությունը կիրականացվի հաջորդ փուլում՝ հաշվի առնելով նույնականացման մեխանիզմների յուրահաստկությունը:

(ՊՊ9.3), որոնք մշակվում են էլեկտրոնային վաճառքի ընթացքում և ստանալով անալիտիկ տվյալներ Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլից (ԱՀ5.1):

#### 2.1.4 Գործակալների ռեեստր

Այս ենթամոդուլը պետք է թույլ տա ՊՊԿՎ աշխատակիցներին իրականացնել առաջնային գործակալների վարքագծի գնահատում, ինչպես նաև վարել առաջնային գործակալների և պոտենցիալ մասնակիցների ռեեստրը:

Առաջնային գործակալների վարքագծի գնահատման գործընթացի համար անհրաժեշտ տվյալները կստացվեն Աճուրդի ենթամոդուլից և ՀՀ ԿԲ-ից՝ համապատասխանաբար Գործակալների առաջնային (ՊՊ6) և երկրորդական շուկայում դրսևորած ակտիվության ցուցանիշների տեսքով (ԿԲ3), ինչը հնարավորություն կտա ավտոմատացնել գործառույթը՝ ապահովելով ՊՊԿՎ աշխատակիցների աշխատանքը մեկ համակարգի շրջանակում:

Իսկ աճուրդի կազմակերպման և իրականացման նպատակով գործակալների ռեեստրը Աճուրդի ենթամոդուլին կտրամադրի աճուրդի գործընթացում առաջնային գործակալների վերաբերյալ տեղեկատվությունը, նրանց՝ աճուրդին մասնակցելու թույլտվությունները, և նմանատիպ այլ տեղեկատվություն առաջնային գործակալների վերաբերյալ (ՊՊ15):

#### 2.2 Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ

Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլը նախատեսված է Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության կողմից իրականացվող գործընթացների ավտոմատացման և էլեկտրոնային եղանակով իրականացման համար: Մոդուլը տվյալների փոխանակում է իրականացնում Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի հետ՝ տրամադրելով տվյալներ, որոնք մշակվում են ենթամոդուլի շրջանակում, և ստանում այլ անալիտիկ տվյալներ, որոնք մշակվում են ԿՖԿՏՀ բոլոր մոդուլների կողմից տրամադրված տվյալների հիման վրա (ԲՊ3 և ԱՀ6): Մոդուլը բաղկացած է երեք ենթամոդուլներից՝

- Մուրհակներ
- Վարկեր և պարտքեր
- Բյուջետային երաշխիքներ:

### 2.2.1 Մուրհակներ ենթամոդուլ

Այս ենթամոդուլը նախատեսվում է ներդնել հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրման, հաշվառման և մուրհակների մարման հետ կապված աշխատանքների ավտոմատացման համար: Ենթամոդուլը տվյալներ է տրամադրում Բյուջետավորման մոդուլին և Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլին, որոնք մշակվում են ենթամոդուլի շրջանակում: Մասնատրապես Բյուջետավորման մոդուլին տվյալներ է տրամադրում հաջորդ բյուջետային տարում մարվող հասարակ և փոխանցելի մուրհակների վերաբերյալ(ԲՊ1), իսկ Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլին տվյալներ մուրհակների հաշվառումից(ԲՊ2): Ենթամոդուլը տվյալներ կարող է ստանալ նաև ՊԵԿ-ից վճռով ծագած պարտավորությունը՝ միատեսակ, հանդիպական և այլ պարտավորությունների հետ հաշվանցման հնարավորության առկայության ստուգման համար(ՊԵԿ2):

### 2.2.2 Վարկեր և պարտքեր ենթամոդուլ

Այս ենթամոդուլը նախատեսված է բյուջետային վարկերի և ենթավարկերի տրամադրման և դրանից ծագող հետագա գործընթացների ավտոմատացման համար: Ինչպես նաև այս ենթամոդուլում կնդգրկվի ՀՀ հանդեպ ոչ ռեզիդենտների (Վրաստանի) պարտքի սպասարկման գործընթացը: Ենթամոդուլը տվյալների փոխանակում է իրականացնում Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի հետ(ԲՊ3 և ԱՀ6) մասնավորապես տրամադրված վարկերի գծով վարկառուների կողմից մարման ենթակա պարտավորությունների և փաստացի կատարված մարումների ամենօրյա հաշվարկի մասով, ինչպես նաև տվյալներ է տրամադրում Բյուջետավորման(ԲՊ1)՝ հաջորդ տարվա բյուջեի պլանավորման համար վարկերից և պարտքերից սպասվող եկամուտների մասով: Տվյալներ է տրամադրում նաև Հանրային հատվածի հաշվապահության(ԲՊ2) մոդուլին վարկերի և պարտքերի հաշվառման մասով:

### 2.2.3 Բյուջետային երաշխիքներ ենթամոդուլ

Այս ենթամոդուլը նախատեսված է Բյուջետային երաշխիքների տրամադրման և դրանից բխող գործընթացները ավտոմատացնելու համար: Ենթամոդուլը տվյալներ է տրամադրում Բյուջետավորման մոդուլին(ԲՊ1)՝ հաջորդ տարվա բյուջեի պլանավորման համար վարկերից և պարտքերից սպասվող եկամուտների մասով: Տվյալներ է տրամադրում նաև Հանրային հատվածի հաշվապահության(ԲՊ2) մոդուլին վարկերի և պարտքերի հաշվառման մասով:

Ենթամոդուլը տվյալների փոխանակում է իրականացնում Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի հետ, ինչպես նաև տվյալներ է տրամադրում Հանրային հատվածի հաշվապահության մոդուլներին:

### 2.3 Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ

ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ, որը կիրառելի կլինի ԿՖԿՏՀ բոլոր մոդուլների կողմից՝ անալիտիկ-հաշվետվողական գործառնությունները մեկ տիրույթում իրականացնելու համար: Մանրամասները բերված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթի 2.2.1 գլխում (Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ) փաստաթղթում:

Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը նախատեսվում է կիրառել նաև ՊՊԿՎ-ի «Անալիտիկ գործառնությունների» համար (գործառնությունների խմբավորումը տե՛ս «Ուսումնասիրության ամփոփում» գլխում): Այսինքն՝ Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլներն իր կազմում չի պարունակում առանձին ենթամոդուլ՝ անալիտիկ գործառնությունների համար, փոխարենը՝ նմանատիպ գործառնությունները, ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության աշխատակիցները իրականացնում են Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլում: Վերջինս թույլ է տալիս Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ներքին ենթամոդուլներում մշակված անալիտիկ տվյալները կենտրոնացնել և կիրառել տարբեր անալիտիկ-հաշվետվողական գործառնություններ իրականացնելիս: Բացի Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների տվյալներից, Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը կենտրոնացնում է նաև ԿՖԿՏՀ մյուս մոդուլի անալիտիկ տվյալները, որոնք նույնպես կարող են կիրառվել ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության աշխատակիցների կողմից՝ համապատասխան լիազորության դեպքում:

Այս մոտեցումը թույլ է տալու ինչպես Պետական պարտքի և բյուջեի նկատմամբ պարտավորությունների, այնպես էլ ԿՖԿՏՀ մյուս մոդուլներին իրականացնել հնարավորինս համապարփակ անալիտիկ-հաշվետվողական գործառնություններ:

Մանրամասն նկարագրությունը, թե ինչպես են իրականացվում տվյալների մշակումն ու դրանց անալիտիկ-հաշվետվողական կիրառությունը, բերված է «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթի 2.2.1 գլխում (Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ) փաստաթղթում:

### 2.4 Փոխանակվող տվյալներ

	Ինտերֆեյս	Տվյալներ	Տրամադրող մոդուլ/ենթամոդուլ	Կիրառող մոդուլ/ենթամոդուլ
1	ՊՊ1	Ներգրավվող միջոցներ, դրանց մարումներ և սպասարկումներ	Պետական Պարտքի Սոդուլ/Պարտքի	Բյուջետավորման Սոդուլ

			կառավարում	
2	ՊՊ2	Պարտքի ներգրավման և մարման հաշվառում <ol style="list-style-type: none"> <li>Պարտքային գործիքների պայմանագրեր (հավելված, ժամանակացույց, այլ)</li> <li>Ուղղակի վճարումներ</li> </ol>	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում	Հանրային Հատվածի Հաշվապահություն
3	ՊՊ3	<ol style="list-style-type: none"> <li>Աճուրդի արդյունքային տվյալներ</li> <li>Էլ. վաճառքի արդյունքային տվյալներ</li> </ol>	Պետական Պարտքի Մոդուլ/ Աճուրդ և Էլ. վաճառք	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում
4	ՊՊ4	Պարտքային գործիքի տվյալներ	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում	Պետական Պարտքի Մոդուլ/ Աճուրդ և Էլ. վաճառք
5	ՊՊ5	Առաջնային գործակալների վերաբերյալ տեղեկատվություն	Պետական Պարտքի Մոդուլ/Գործակալների ռեեստր	Պետական Պարտքի Մոդուլ/Աճուրդ
6	ՊՊ6	Աճուրդում մասնակցած գործակալների տվյալներ	Պետական Պարտքի Մոդուլ/Աճուրդ	Պետական Պարտքի Մոդուլ/Գործակալների ռեեստր
7	ՊՊ7	<ol style="list-style-type: none"> <li>ԱՄՏԾ-ի (ISIN կոդ) շնորհման հայտ</li> <li>Գրանցվող պետական պարտատոմսի տվյալներ</li> <li>Աճուրդի արդյունքների նախնական տվյալներ</li> </ol>	Պետական Պարտքի Մոդուլ/ Պարտքի կառավարում	<ol style="list-style-type: none"> <li>Դեպոզիտարիա</li> <li>ԿԲ համակարգեր</li> </ol>

8	ՊՊ8	Էլ. վաճառքի տվյալներ	Պետական Պարտքի Մոդուլ/ Էլ. վաճառքի ենթամոդուլ	E-payments համակարգ
9	ՊՊ9	<ol style="list-style-type: none"> <li>Պարքային գործիքի ձևավորման համար ներկայացված վերլուծական տվյալներ (նախնական կանխատեսումներ և/կամ ժամանակագրություն)</li> <li>Աճուրդների ընթացքում մշակված տվյալներ</li> <li>Էլեկտրոնային վաճառքի ընթացքում մշակված տվյալներ</li> </ol>	Պետական Պարտքի Մոդուլ/ Պարտքի կառավարում	Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ
10	ՊՊ10	Աճուրդի հայտարարության և աճուրդի արդյունքների նախնական տվյալներ	Աճուրդի ենթամոդուլ	Մանրածախ վաճառքի ենթամոդուլ
11	Բ1	Բյուջեի ծախսերի և ելքերի վերաբերյալ տվյալներ	Բյուջետավորման մոդուլ	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում
12	Բ3	Բյուջեի դեֆիցիտային մաս	Բյուջետավորման մոդուլ	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում
13	ԲՊ1	Տրամադրված մուրհակների, վարկերի և պարտքերի, բյուջետային երաշխիքների վերաբերյալ տվյալներ	Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ	Բյուջետավորման մոդուլ
14	ԲՊ2	Մուրհակների, վարկերի և պարտքերի, բյուջետային երաշխիքների	Բյուջեի նկատմամբ պարտավորություն	Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ



		տրամադրման և մարման հաշվառում	ների կառավարման մոդուլ	
15	ԲՊ3	Տրամադրված մուրհակների, վարկերի և պարտքերի, բյուջետային երաշխիքների վերաբերյալ տվյալներ	Բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ	Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ
16	Գ24	Պարտքային գործիքների գանձապետական մուտքեր/ելքեր	Գանձապետարան	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում
17	Գ26	Պարտավորությունների գործիքների գանձապետական մուտքեր/ելքեր	Գանձապետարան	Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մոդուլ
18	ԿԲ2	1.ԿԲ-ում պարտատոմսի գրանցման տեղեկատվություն 2.Աճուրդի վերջնահաշվարկի տվյալներ	ԿԲ համակարգեր	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում
19	ԿԲ3	Գործակալների երկրորդային շուկայում ակտիվություն	ԿԲ համակարգեր	Պետական Պարտքի Մոդուլ/Գործակալների ռեեստր
20	ԴԵՊ1	ԱՄՏԾ-ի (ISIN կոդ) տվյալներ	Դեպոզիտարիա	Պետական Պարտքի Մոդուլ/Պարտքի կառավարում
21	ԱՀ5	1. Անալիտիկ տվյալներ Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլից 2. Պարտքային գործիքների ձևավորման համար անհրաժեշտ վերլուծական տվյալներ	Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ	Պետական Պարտքի Մոդուլ 1. Պարտքի կառավարման ենթամոդուլ

22	ԱՀ6	Անալիտիկ տվյալներ Անալիտիկ- Հաշվետվողական մոդուլից	Անալիտիկ- Հաշվետվողական մոդուլ	Բյուջեի նկատմամբ պարտավորություններ ի կառավարման մոդուլ/ Բոլոր ենթամոդուլներ
23	ԱՀ20	Հաշվետվություններ	Անալիտիկ- Հաշվետվողական մոդուլ	ՀՀ Կառավարություն ՏՆ/
24	ՊԵԿ2	Հաշվանցման հնարավորության և պետ տուրքի վերաբերյալ տվյալներ	ՊԵԿ համակարգեր	Բյուջեի նկատմամբ պարտավորություններ ի կառավարման մոդուլ/Մուրհակներ ենթամոդուլ

### 3. Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ֆունկցիոնալ նկարագրություն

Նախորդ բաժնում ներկայացվում էր Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների առաջարկվող կառուցվածքը՝ բաղկացուցիչ ենթամոդուլները, ինտեգրվող համակարգերը, արտաքին մոդուլներն ու այդ բոլորի փոխկապակցվածությունը Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների համատեքստում:

Այս բաժնում ներկայացվում են ՊՊԿՎ և Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության օպտիմալ գործառույթները՝ Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների միջոցով: Այլ կերպ ասած, Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների ֆունկցիոնալ նկարագրությունը:

Գործառույթները ներկայացված են ըստ խմբավորման (տե՛ս բաժին 1 – Ուսումնասիրության ամփոփում): Նմանատիպ գործառույթները ներկայացված են մեկ գործընթացով:

#### 3.1 Անալիտիկ գործառույթներ

Այս խմբի գործառույթների մեջ են մտնում.

- 1.1.1 Պարտքի ներգրավման միջնաժամկետ ռազմավարության մշակում
- 2.1 Կանխիկ հոսքերի կանխատեսում

- 1.4 Վիճակագրություն և հաշվետվություն:

Դրանց համար նախատեսվում է կիրառել Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը, որի մանրամասն նկարագրությունը՝ կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, կիրառման ձևերը և այլն, բերված են «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթի 2.2.1 գլխում (Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ):

Ընդհանուր առմամբ, Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլները կարող են կիրառել Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը հետևյալ սկզբունքով.

- Տվյալների մոդելավորման գործիքների միջոցով հավաքագրել, ստրուկտուրավորել (համակարգել) և պահպանել տվյալներ,
- Մետատվյալների մշակման գործիքների կիրառմամբ տալ իմաստաբանական նկարագրություն ստրուկտուրավորված տվյալներին,
- Անալիտիկայի գործիքների կիրառմամբ մշակել ստրուկտուրավորված տվյալները և ստանալ
  - պարտքի կառավարման ռազմավարության վերաբերյալ տվյալներ,
  - կանխիկ հոսքերի կանխատեսումներ,
  - տարատեսակ վիճակագրություններ և հաշվետվություններ:

### 3.2 Պարտքի ներգրավում

Այս բաժնում նկարագրվում են հետևյալ խմբի գործառույթները.


- 1.2 Ռազմավարության իրականացում
- 1.3 Պարտքի հաշվառում, մարում և սպասարկում

Ֆունկցիոնալ նկարագրման համար ընտրվել է նույնաբնույթ գործառույթները մեկ համընդհանուր գործընթացով ներկայացնելու սկզբունքը: Այս սկզբունքը կիրառվում է նաև գործընթացների օպտիմալ տարբերակները ներկայացնելիս:

Բոլոր գործառույթները նախատեսվում են իրականացնել Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլների «Պարտքի կառավարում» ենթամոդուլի միջոցով:

Պարտքի ներգրավումն իրականացվում է երկու միջոցներով՝ պարտատոմսեր (ՊԳՊ և արտարժույթային) և վարկեր:

Վերը նշված խմբերի բոլոր գործառույթները կարելի է ներկայացնել հետևյալ փուլային հաջորդականությամբ (նկար 3.1).



Նկար 3.1 Խմբավորված գործառնությունների փուլային հաջորդականություն

Այլ կերպ ասած՝ ն՛ պարտատուների (ՊԳՊ և արտարժույթային), ն՛ վարկերի համար գործում է ներկայացված ընթացակարգը.

- Փուլ 1 – պարտքային գործիքների ձևավորում
- Փուլ 2 – փոխառու միջոցների ներգրավում
- Փուլ 3 – մարում և սպասարկում:

Ամեն տեսակի միջոցի գործընթացն ունի յուրահատկություններ, սակայն Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլներից տեխնիկական պահանջը բոլորի դեպքում նույնն է: Ուստի, առաջարկվող լուծումները կներկայացվեն այն մակարդակով, որը բոլոր տեսակների համար ընդհանրական է:

*«Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարում (3.2)» գործառնությոը իրականացվում է նույն փուլային հաջորդականությամբ՝ բացառությամբ Փուլ 2-ի (փոխառու միջոցների ներգրավում): Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության դեպքում ձևավորվում է պարտք, որը պետք է սպասարկվի և մարվի: Այս գործառնությոի ավտոմատացման և օպտիմալացման նկարագրությունը փաստաթղթում չի առանձնացվի, քանի որ Փուլ 1-ում և 3-ում ներկայացված գործիքներն ու դրանց կիրառման կարգերը բավարարում են նաև այս գործառնությոին:*

### Փուլ 1 – Պարտքային գործիքների ձևավորում

Այս փուլում իրականացվում են Հավելված 1-ում բերված գործառնություններից.

- 1.3.1 «Պարտքային գործիքների գրանցում» խմբում ներառվածները (անկախ տեսակից)
- Միայն պարտատուների համար (վարկերի դեպքում չկան նմանատիպ գործընթացներ)՝ Պարտատուների թողարկման խմբում ներառվածները (1.2.2.1 կամ 1.2.3 կախված տեսակից՝ ՊԿՊ, ՄԺՊ, ԵԺՊ, ԽԱՊ, արտարժույթային):

**Պարտքային գործիքների գրանցումը** բոլոր տեսակների համար իրենից ներկայացնում է նմանատիպ ընթացակարգ.

- Mulberry համակարգում լրացվում է հրամանի/համաձայնագրի նախագիծը՝ մշակված ձևաթղթով,
- Ուղարկվում է նախարարի/փոխնախարարի հաստատման/վերանայման,
- Նախարարի/փոխնախարարի կողմից նույն Mulberry համակարգով իրականացվում են ուղղումներ կամ հաստատում:


Հնարավոր է լինեն առաջարկներ նախարարի կողմից, կատարվեն ուղղումներ և այլն: Այսինքն, ձևաթղթի ստեղծումից մինչև հաստատում հնարավոր է բազմաքայլ փաստաթղթաշրջանառություն, որն իրականացվում է Mulberry համակարգով:

Գործընթացը հնարավոր է նախատեսել Պարտքի կառավարման ենթամոդուլում, որը թույլ կտա՝

- Մշակել (ստեղծել, խմբագրել, հեռացնել և այլն) պարտքային գործիք,
- Համատեղ աշխատել վերջինիս վրա (բաժիններ և նախարար),
- Առաջարկություններ ու մեկնաբանություններ տալ նախագծերին,
- Նախագծին առնչվող տեղեկատվությունը մշակել և պահպանել կենտրոնացված էլեկտրոնային ձևաչափով և այլն:

Բացի վերը ներկայացվածից, ցանկալի է, որ Պարտքի կառավարման ենթամոդուլը թույլ տա իրականացնել որոշակի վերլուծություններ և որոշումների կայացում (մինչև հրամանի/համաձայնագրի հաստատումը)՝ ելնելով նախագծում առկա տվյալներից: Այս ֆունկցիոնալ հնարավորությունը կարող է ապահովվել Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլի կողմից՝ փոխգործակցելով վերջինիս հետ (մանրամասները «ԿՖԿՏՀ ներդրման մոդել» փաստաթղթի 2.2.1 գլխում (Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ):

Ամփոփելով ներկայացվածը՝ պարտքային գործիքների գրանցման փուլի օպտիմալացման դիագրամը ներկայացված է նկար 3.2-ում:



Նկար 3.2. Պարտքային գործիքների գրանցման փուլի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Մշակել (ստեղծել, խմբագրել, հեռացնել և այլ) պարտքային գործիք, համատեղ աշխատել վերջինիս վրա (բաժիններ և նախարար), առաջարկություններ ու մեկնաբանություններ տալ նախագծերին, նախագծին առնչվող տեղեկատվությունը մշակել և պահպանել կենտրոնացված էլեկտրոնային ձևաչափով
Նկարագրություն/ ընթացք	Հրամանի նախագծի մշակման փուլի բոլոր գործառնությունները նախատեսվում է իրականացնել միայն էլեկտրոնային համակարգով՝ Պետական Պարտքի մոդուլում՝ ապահովելու համար հրամանների նախագծերին վերաբերող տեղեկատվության մշակումն ու պահպանումը կենտրոնացված կարգով: Նախագիծը կստեղծվի ՊՊԿՎ լիազորված աշխատակցի կողմից: Նախագծում առկա վերլուծական տվյալները (ՊՊԿ.1) կներկայացվեն Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ, որտեղ տվյալների (ԱՅ5.2) վերլուծությունից հետո (ժամանակացույց, եկամտաբերություն և այլն) դրանք կներկայացվեն նախարարի/փոխնախարարի դիտարկմանը: Փոփոխությունների անհրաժեշտության պարագայում փոփոխությունների առաջարկությունը կներկայացվի ՊՊԿՎ լիազորված աշխատակցին, որը տվյալների վերլուծությունից հետո այն կրկին կներկայացնի դիտարկման՝ շրջափուլը կկրկնվի այնքան, մինչև որ այլևս չի լինի փոփոխությունների անհրաժեշտություն և նախագիծը կհաստատվի:

	Դրա համաձայն կկազմվի կանխատեսումների պլանը՝ ինքնաշխատ կերպով կամ ձեռքով փոփոխելու հնարավորությամբ:
Հղում առկա գործընթացին	Պ1– Պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) թողարկում Պ2–Պետական միջնաժամկետ (ՄԺՊ) և երկարաժամկետ (ԵԺՊ) արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում Պ3–Պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում
Տիրույթ	ՊՊ-Պարտքի կառավարման ենթամոդուլ, Անալիտիկ- հաշվետվողական մոդուլ
Դերակատարներ	ՊՊԿՎ աշխատակից, նախարար/ փոխնախարար
Մուտքային տվյալներ	ԱՀ5.2
Ելքային տվյալներ	ՊՊ9.1


Պարտքային գործիքների ձևավորման փուլի մյուս ընթացակարգերից են տարատեսակ պարտատոմսերի թողարկումը, որոնք նույնպես նմանատիպ գործընթացներ են<sup>3</sup> և ունեն միննույն պահանջը Պետական Պարտքի մոդուլից:

Պարտատոմսերի թողարկումը կարող է տեղի ունենալ, եթե առկա է նախարարի կողմից հրամանի հաստատում (պարտքային գործիքների գրանցում):

Պարտատոմսերի թողարկման ենթափուլի օպտիմալացման դիագրամը ներկայացված է նկար 3.3-ում:

<sup>3</sup> Պարտատոմսերի թողարկման գործընթացը նմանատիպ է բոլոր տեսակի պարտատոմսերի համար: Տարբերությունն այն է, որ կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի թողարկումն իրականացվում է Գործառնական բաժնի կողմից, իսկ խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումը՝ ԳՊԱԿ բաժնի կողմից: Կախված պարտատոմսերի տեսակից՝ գործընթացներում առկա է նաև որոշակի տարբերություն, սակայն, ընդհանուր առմամբ, բոլորում առկա են նույն օպտիմալացման խնդիրները: Ուստի, հետագայում առաջարկվող օպտիմալացումը կդիտարկվի մեկ ընդհանրացված մոդելի վրա:





Նկար 3.3. Պարտատոմսերի թողարկման ենթափուլի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	ԱՄՏԾ (ISIN) կոդի ստացում, պարտատոմսերի թողարկում
Նկարագրություն/ ընթացք	<p>Պարտատոմսերի թողարկման համար նույնպես նախատեսվում է Պարտքի կառավարման ենթամոդուլի կիրառումը, քանի որ շատ գործառնություններ իրականացվում են ձեռքով և տվյալները պահպանվում են ապակենտրոնացված ֆայլերով:</p> <p>Տվյալների կենտրոնացումը Պետական Պարտքի և Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլներում թույլ կտա խուսափել անհամատեղելիությունից և հավելյալ ստուգումներից՝ իրականացնելով տվյալների հարմոնիզացիա:</p> <p>Թողարկման հայտի հաստատումից հետո հայտը (ՊՊ7.1) կփոխանցվի Դեպոզիտարիա՝ ԱՄՏԾ (ISIN) կոդի ստացման համար, որից հետո տրամադրված ԱՄՏԾ (ISIN) կոդը (ԴԵՊ1) կպահպանվի Պարտքի կառավարման ենթամոդուլում: ՊՊԿՎ լիազորված աշխատակցի կողմից պարտատոմսերի տվյալների ներմուծումից հետո պարտատոմսերի տվյալները (ՊՊ7.2) կփոխանցվեն ԿԲ՝ գրանցման, և այնտեղ գրանցվելուց հետո տվյալները (ԿԲ2) կստացվեն և կպահպանվեն Պարտքի կառավարման ենթամոդուլում:</p> <p>Այսպիսով, ԱՄՏԾ (ISIN) կոդի ստացված տվյալները նախ կպահպանվեն Պարտքի կառավարման ենթամոդուլի կողմից (կփոխարինի Հաշվառման և սպասարկման բաժնի կողմից ֆայլով գրանցմանը), այնուհետև, հետագա գործընթացներում, կթույլատրի կիրառել միայն այդ տվյալները:</p> <p>Գործող գործընթացում առկա է նաև թողարկման հրամանի գրանցում Հաշվառման և սպասարկման բաժնի կողմից, որն այլևս գործածելի չի լինի՝ համակարգի կիրառմամբ, քանի որ թողարկման հրամանի տվյալները արդեն իսկ մշակվելու և պահպանվելու են վերջինիս կողմից:</p>

Հղում անկա գործընթացին	Պ1– Պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) թողարկում Պ2– Պետական միջնաժամկետ (ՄԺՊ) և երկարաժամկետ (ԵԺՊ) արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում Պ3– Պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում
Տիրույթ	ՊՊ-Պարտքի կառավարման ենթամոդուլ, ԿԲ համակարգեր, Դեպոզիտարիա
Դերակատարներ	ՊՊԿՎ աշխատակից, փոխնախարար
Մուտքային տվյալներ	ԿԲ2, ԴԵՊ1
Ելքային տվյալներ	ՊՊ7.1, ՊՊ7.2

## Փուլ 2 – Փոխառու միջոցների ներգրավում

Այս փուլը պարտատոմսերի և վարկերի դեպքում իրականացվում է սկզբունքորեն տարբեր ձևերով.

- Պարտատոմսերի համար - իրականացվում են Հավելված 1-ի 1.2.2.2 խմբում ներառված տեղաբաշխման և հետզնման գործառույթները,
- Վարկերի համար – 1.3.2.2 խմբում ներառված վարկային միջոցների մասհանումները:

## Պարտատոմսեր

Պարտատոմսերի մասով, որպես փոխառու միջոցների ներգրավում, իրականացվում են հետևյալ տեսակի գործառույթները.

- Տեղաբաշխման աճուրդ
- Հետզնման աճուրդ
- Վերջիններիս գրանցում:

Տեղաբաշխման աճուրդին վերաբերող գործընթացները նմանատիպ են կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի դեպքում, որոնց համար կներկայացվեն առանձին օպտիմալացման տարբերակներ: Առկա է գործընթացների որոշակի տարբերություն խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում: Այս տեսակի պարտատոմսերի վաճառքի գործընթացների օպտիմալացումը կներկայացվի առանձին:

Այս փուլի համար նույնպես նպատակահարմար է միասնական էլեկտրոնային համակարգի կիրառումը (Պետական Պարտքի մոդուլ - Պարտքի կառավարման և Աճուրդի ենթամոդուլներ), որը թույլ կտա ինչպես կենտրոնացնել փուլի բոլոր տվյալները, այնպես էլ ապահովել ներգրավված աշխատակիցների աշխատանքը մեկ համակարգի շրջանակում: Ինչպես արդեն նշել ենք նախորդ բաժիններում, տվյալների ոչ կենտրոնացված լինելը կարող է հանգեցնել տվյալների անհամատեղելիության: Գործառույթների իրականացումը մեկ համակարգում թույլ կտա նաև հարմոնիզացնել տվյալները և խուսափել նման խնդրից:

Օպտիմալացման տեսակետից պետք է դիտարկել ներկայացված արտաքին համակարգերի ինտեգրումը առաջարկվող Պետական Պարտքի մոդուլի (ենթամոդուլների) հետ կամ վերջինում նախատեսել այնպիսի ֆունկցիոնալ հնարավորություններ, որը թույլ կտա հրաժարվել դրանց կիրառումից:


Օպտիմալացման տարբերակները կներկայացվեն առանձին՝ տեղաբաշխման, հետզնման աճուրդների և ԽԱՊ-երի վաճառքի համար:

### ***Տեղաբաշխման աճուրդ***

Տվյալների մշակման և պահպանման գործառույթները, ինչպես նաև աճուրդը կիրականացվեն Պետական Պարտքի մոդուլների միջոցով՝ Աճուրդի ենթամոդուլով, որը հնարավորություն կտա կենտրոնացնել աճուրդի փուլում մշակվող տվյալները:

Այսպիսով, ստացվում է ինքնաբավ համակարգ, որը թույլ է տալիս բոլոր մասնակիցներին ողջ տեղաբաշխման աճուրդի փուլն իրականացնել մեկ համակարգով:

Տեղաբաշխման աճուրդի գործընթացի օպտիմալացման դիագրամը ներկայացված է նկար 3.4-ում:



Նկար 3.4. Տեղաբաշխման աճուրդի գործընթացի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Պետական կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի վաճառք՝ աճուրդի կազմակերպման և իրականացման միջոցով
Նկարագրություն/ ընթացք	Պետական կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի աճուրդը նախատեսվում է իրականացնել Պետական պարտքի մոդուլի Աճուրդի ենթամոդուլի միջոցով: Քանի որ առաջնային գործակալների վարքագծի գնահատման գործառույթը ավտոմատացնելու համար նախատեսվում է առանձին ենթամոդուլ՝ Գործակալների ռեեստրը, ուստի այստեղից Աճուրդի ենթամոդուլին փոխանցված տեղեկատվության (ՊՊ5) հիման վրա աճուրդին կարող են մասնակցել միայն առաջնային գործակալների ցանկում ընդգրկվածները՝ աճուրդի մասին հայտարարության հրապարակումից հետո՝ լրացնելով հայտերը Աճուրդի ենթամոդուլում: Աճուրդի մասին հայտարարությունը ստեղծվում է համաձայն Պարտքի կառավարման ենթամոդուլում ձևավորված պարտքային գործիքների (ՊՊ4):

	<p>Այնուհետև հայտերը ինքնաշխատ կերպով մշակվում են Պարտքի կառավարման ենթամոդուլում և օպտիմալ տարբերակները ներկայացվում են ՊՊԿՎ լիազորված աշխատակցին, ով էլ ընտրում է համապատասխան տարբերակը և աճուրդի նախնական ձևավորված տվյալները պահպանվում են Պարտքի կառավարման ենթամոդուլում: Այդ տվյալները զուգահեռաբար փոխանցվում են նաև մանրածախ վաճառքի ենթամոդուլ հայտարարության ստեղծման տվյալների հետ մեկտեղ (ՊՊ10)՝ մանրածախ վաճառքի իրականացման համար, որը տեղի է ունենում ԽԱՊ-երի վաճառքի սկզբունքով (տես՝ ԽԱՊ-երի վաճառք՝ մանրածախ վաճառքի ենթամոդուլի և առևտրային բանկերի՝ համապատասխան ներկայացուցիչների միջոցով):</p> <p>Լրացուցիչ աճուրդի անհրաժեշտության դեպքում շրջափուլը կրկնվում է, իսկ դրա բացակայության պարագայում՝ նախնական տվյալները (ՊՊ7.3) փոխանցվում են ԿԲ՝ վերջնահաշվարկի համար և ԿԲ-ից վերջնահաշվարկի (ԿԲ2.2) ստացումից հետո տվյալները գրանցվում են Պարտքի կառավարման ենթամոդուլում (ՊՊ3):</p> <p>Աճուրդում մասնակցած գործակալների տվյալները (ՊՊ6) փոխանցվում են Գործակալների ռեեստր՝ Առաջնային գործակալների վարքագծի գնահատման գործընթացի համար:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>Պ4- Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ</p> <p>Պ6- Պետական գանձապետական պարտատոմսերի (բացառությամբ ԽԱՊ-երի) տեղաբաշխումների և հետգնումների աճուրդների գրանցում</p>
<p>Տիրույթ</p>	<p>ՊՊ-Աճուրդի ենթամոդուլ, ԿԲ համակարգեր</p>
<p>Դերակատարներ</p>	<p>ՊՊԿՎ աշխատակից, գործակալ</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	<p>ՊՊ4, ՊՊ5</p>
<p>Ելքային տվյալներ</p>	<p>ՊՊ3, ՊՊ6</p>


***Հետգնման աճուրդ***

Հետգնման աճուրդի գործառույթները բնույթով նման են տեղաբաշխման աճուրդին:

Տվյալների մշակման և պահպանման գործառույթները, ինչպես նաև աճուրդը, պետք է իրականացվեն միայն Պետական Պարտքի մոդուլի միջոցով՝ Աճուրդի ենթամոդուլով:

Այս տարբերակում ստացվում է ինքնաբավ համակարգ, որը թույլ է տալիս բոլոր մասնակիցներին ողջ աճուրդի փուլն իրականացնել մեկ համակարգով:

Հետզնման աճուրդի գործընթացի օպտիմալացման դիագրամը ներկայացված է նկար 3.5-ում:



Նկար 3.5. Հետզնման աճուրդի գործընթացի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Պետական կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի հետզնման՝ հետզնման աճուրդի կազմակերպման և իրականացման միջոցով
Նկարագրություն/ ընթացք	<p>Պետական կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի հետզնման աճուրդը՝ նախատեսվում է իրականացնել Պետական Պարտքի մոդուլի՝ Աճուրդի ենթամոդուլի միջոցով: Քանի որ առաջնային գործակալների վարքագծի գնահատման գործառույթը ավտոմատացնելու համար նախատեսվում է առանձին ենթամոդուլ՝ Գործակալների ռեեստրը, ուստի այստեղից Աճուրդի ենթամոդուլին փոխանցված տեղեկատվության (ՊՊ15) հիման վրա հետզնման աճուրդին կմասնակցեն առաջնային գործակալների ցանկում ընդգրկված գործակալները՝ հետզնման աճուրդի մասին հայտարարության հրապարակումից հետո լրացնելով հայտերը Աճուրդի ենթամոդուլում: Հետզնման աճուրդի մասին հայտարարությունը ստեղծվում է՝ համաձայն Պարտքի կառավարման ենթամոդուլում ձևավորված պարտքային գործիքների (ՊՊ4):</p> <p>Այնուհետև հայտերը Պարտքի կառավարման ենթամոդուլի կողմից ինքնաշխատ կերպով կմշակվեն և օպտիմալ տարբերակները</p>

	<p>կներկայացվեն ՊՊԿՎ լիազորված աշխատակցին, ով էլ կրնտրի համապատասխան տարբերակը և հետզնման աճուրդի տվյալները կպահպանվեն Պարտքի կառավարման ենթամոդուլում: Նախնական տվյալները կփոխանցվեն ԿԲ՝ վերջնահաշվարկի համար և ԿԲ-ից վերջնահաշվարկի ստացումից հետո տվյալները կգրանցվեն Պարտքի կառավարման ենթամոդուլում (ՊՊ3):</p> <p>Հետզնման աճուրդում մասնակցած գործակալների տվյալները (ՊՊ6) կփոխանցվեն Գործակալների ռեեստր՝ Առաջնային գործակալների վարքագծի գնահատման գործընթացի համար:</p>
Հղում առկա գործընթացին	<p>Պ5- Պետական գանձապետական պարտատոմսերի հետզնման աճուրդ</p> <p>Պ6- Պետական գանձապետական պարտատոմսերի (բացառությամբ ԽԱՊ-երի) տեղաբաշխումների և հետզնումների աճուրդների գրանցում</p>
Տիրույթ	ՊՊ-Աճուրդի ենթամոդուլ, ԿԲ համակարգեր
Դերակատարներ	ՊՊԿՎ աշխատակից, գործակալ
Մուտքային տվյալներ	ՊՊ4, ՊՊ5
Ելքային տվյալներ	ՊՊ3, ՊՊ6

### ***Խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի վաճառք***


ԽԱՊ-երի վաճառքը տարբերվում է մյուս պարտատոմսերի աճուրդից: Ներկայումս այն իրականացվում է երկու տարբերակով.

- Առցանց (օնլայն) - [gp.minfin.am](http://gp.minfin.am) համակարգի միջոցով,
- Առկա (օֆլայն) – Առևտրային բանկերում՝ համապատասխան ներկայացուցիչների միջոցով:

Երկու դեպքում էլ վաճառքի (հետզնման դեպքում՝ նաև հետզնման) տվյալները գրանցվում են Depend համակարգում: Վերջինիս հասանելիություն ունի նաև ԳՊԱԿ բաժինը, որը հաստատում է նշված տվյալները: Այնուհետ, LS Finance համակարգի միջոցով նախնական տվյալները ուղարկում է ԿԲ: Հաջորդիվ՝ գործընթացը նման է մյուս տեսակի պարտատոմսերի աճուրդին:

Առաջարկվող օպտիմալացման տարբերակը բերված է հաջորդիվ.





Նկար 3.6. ԽԱՊ-երի վաճառքի գործընթացի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	ԽԱՊ-երի վաճառք՝ մանրածախ վաճառքի ենթամոդուլի և առևտրային բանկերի՝ համապատասխան ներկայացուցիչների միջոցով
Նկարագրություն/ընթացք	<p>ԽԱՊ-երի վաճառքի, ինչպես նաև տվյալների մշակման և պահպանման գործառնությունները, նախատեսվում է իրականացնել Պետական Պարտքի մոդուլի մանրածախ վաճառքի ենթամոդուլում (համաձայն Պարտքի կառավարման ենթամոդուլում ձևավորված պարտքային գործիքների - ՊՊ4), որպեսզի հնարավոր լինի կենտրոնացնել վաճառքի փուլում մշակվող տվյալները:</p> <p>Ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերվող ԽԱՊ-երի վաճառքն ինչպես մանրածախ վաճառքի ենթամոդուլի, այնպես էլ առևտրային բանկերի ներկայացուցիչների միջոցով իրականացնելու դեպքում, գնման</p>

	<p>փուլում տեղի է ունենում տվյալների ստուգում մանրաձախ վաճառքի ենթամոդուլում գրանցված (արդեն իսկ վաճառված) և սկզբնական հասանելի տվյալների հետ:</p> <p>Հասանելիության ստուգումից հետո տեղի է ունենում հասանելիության հաղորդագրության գեներացում և գնման տվյալների գրանցում մանրաձախ վաճառքի ենթամոդուլում:</p> <p>Այնուհետև, ՊՊԿՎ լիազորված աշխատակիցը ամենօրյա կտրվածքով որոշակի հստակ ժամանակահատվածում հաստատում է տվյալները, պահպանում և ԿԲ է ուղարկում նախնական տվյալները՝ վերջնահաշվարկի համար: ԿԲ-ից վերջնահաշվարկի տվյալների ստացումից հետո տեղի է ունենում դրանց պահպանում և գրանցում Պարտքի կառավարման ենթամոդուլում (ՊՊ3):</p> <p>Էլ. վաճառքի ենթամոդուլը գնման փուլում տվյալներ (ՊՊ8) է փոխանակում պետական վճարումների էլեկտրոնային E-payments համակարգի հետ:</p> <p>Այսպիսով, ստացվում է ինքնաբավ համակարգ, որը թույլ է տալիս բոլոր մասնակիցներին ողջ վաճառքի փուլն իրականացնել մեկ համակարգով: Բացի այդ, թույլ է տալիս նախապես կանխարգելել անհասանելի ԽԱՊ-երի վաճառքը (օր.՝ եթե դեռ հաստատված չէ ԳՊԱԿ-ի կողմից, բայց չի էլ կարող հաստատվել, քանի որ լրացել է սահմանաչափը):</p>
Հղում առկա գործընթացին	<p>Պ26– Գանձապետական պահառուի առցանց եղանակով (online) պարտատոմսերի մանրաձախ վաճառքի գործընթաց</p> <p>Պ27– Գանձապետական պահառուի սպասարկման կետերի միջոցով պարտատոմսերի մանրաձախ վաճառքի գործընթաց</p>
Տիրույթ	ՊՊ-Էլ. վաճառքի ենթամոդուլ, Պետական վճարումների էլեկտրոնային E-payments համակարգ, առևտրային բանկ
Դերակատարներ	ՊՊԿՎ աշխատակից, ֆիզ. անձ, առևտրային բանկում ներկայացուցիչ
Մուտքային տվյալներ	ՊՊ4
Ելքային տվյալներ	ՊՊ3, ՊՊ8

### Վարկեր

Վարկերի պարագայում փոխառու միջոցների ներգրավումն իրենից ներկայացնում է մասհանումների գործընթացը: Մասհանումների մանրամասն նկարագրությունը բերված է Պ13.1-Պ13.5 բիզնես գործընթացների նկարագրության մեջ: Այս գործընթացի շրջանակներում իրականացվում են հետևյալ տեսակի գործառնությունները.

1. Վարկի գծով մասհանման հայտերը և կից փաստաթղթերը (ըստ անհրաժեշտության) ստորագրելու իրավասություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների հավաքագրում,
2. Հերթական մասհանման հայտի և կից փաստաթղթերի պատրաստում և ստորագրում,
3. Հայտի նախնական հաշվառում,
4. Հայտերի ներկայացում վարկատուին,
5. Հայտի շտկում (եթե կարիք լինում է՝ ներկայացվում է վարկատուի կողմից),
6. Հայտի հաստատում,
7. Փաստացի ստացված վարկային միջոցների ստուգում (հնարավորության դեպքում),
8. Մասհանումների հաշվառում:

Վերը ներկայացված գործառույթները ՊՊԿՎ Հաշվառման և սպասարկման բաժնում իրականացվում են MS Excel ֆայլերում: Տվյալները ստացվում են էլ. փոստով հարցումների կամ այլ միջոցով:

Այս գործառույթները Պետական Պարտքի մոդուլում իրականացնելը հնարավորություն կտա՝


- Հրաժարվել տարատեսակ MS Excel ֆայլերում տվյալների մշակումից և կենտրոնացնել դրանց մշակումը մեկ ընդհանուր միջավայրում,
- Կենտրոնացնել մշակված և մշակման ենթակա տվյալները մեկ տիրույթում՝ ԿՏԿՏՀ ամբողջ շրջանակում տարբեր գործընթացներում և տարբեր դերակատարների համատեղ կիրառման համար:

Սակայն, դրանցից ոչ բոլորն է հնարավոր ավտոմատացնել, քանի որ կան որոշակի պահանջներ, որոնք ենթակա չեն ավտոմատացման, օրինակ՝

- ստորագրությունների նմուշների հավաքագրում,
- հայտի ստորագրում,
- հայտի ներկայացում վարկատուին:

Վերջիններիս պահանջը տարբեր վարկատուների պարագայում կարող է տարբերվել: Օրինակ՝ տարբեր վարկատուներ ունեն հայտի ներկայացման իրենց գործընթացային պահանջը՝ էլեկտրոնային փոստով, իրենց համակարգերում մուտքագրման եղանակով և այլն: Կամ որոշ վարկատուների պարագայում կարող է ընդունվել էլեկտրոնային ստորագրություններ, որոշների դեպքում՝ ոչ:

Ընդհանուր առմամբ, նշված գործառույթներից կարելի է ավտոմատացնել նրանք, որոնք հնարավոր է: Ավտոմատացված գործառույթները կիրականացվեն Պարտքի կառավարման ենթամոդուլում, որի պրոցեսային դիագրամը բերված է նկար 3.7-ում:



Նկար 3.7. Մասհանումների ավտոմատացման գործընթաց

Նպատակ	Մասհանումների գործընթացի կազմակերպում, մասհանման հայտերի հաշվառում, հաստատում, հայտի տվյալների պահպանում
Նկարագրություն/ ընթացք	<p>Մասհանման գործընթացի ոչ բոլոր փուլերն է հնարավոր ավտոմատացնել, քանի որ տարբեր վարկատուների պարագայում պահանջները կարող են տարբերվել ստորագրությունների նմուշների հավաքագրման, հայտի ստորագրման և վարկատուին հայտի ներկայացման տարբերակից կախված:</p> <p>Մասհանման գործընթացի դեպքում նախատեսվում է իրականացնել վարկատուին ուղարկված հայտի նախնական հաշվառում: Եթե գումարը նախատեսված է ստանալ գանձապետական հաշվին, ապա գումարի ստացման փաստի վերաբերյալ հաստատում ստացվում է Գանձապետական մոդուլից (ԳՁ4) և իրականացվում է հաշվառում՝ ինքնաշխատ եղանակով: Հակառակ դեպքում (երբ գումարը փոխանցվում է ոչ գանձապետական հաշվի), գումարի ստացման հաստատում և հաշվառումը իրականացվում է ՊՊԿՎ աշխատակցի կողմից՝ մուտքագրման եղանակով:</p> <p>Հայտի հաստատումից հետո հայտի տվյալները հաշվառվում են: Թարմացված պարտքային գործիքների տվյալները՝ ՊՊ2</p>


	(պայմանագրերը, հավելված, ժամանակացույց, և այլ) ուղարկվում են Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլ՝ հաշվառման համար:
Հղում անկա գործընթացին	Պ13- Արտաքին վարկերի գծով մասհանման գործընթաց Պ13.1- Արտաքին վարկերի գծով մասհանումներ_Հատուկ հաշիվ & փոխհատուցում Պ13.2- Արտաքին վարկերի գծով մասհանումներ_Բյուջետային աջակցություն Պ13.3- Արտաքին վարկերի գծով մասհանումներ_Ուղղակի վճարում Պ13.4- Արտաքին վարկերի գծով մասհանումներ_Վարկավորման պայմանների ամրագրում Պ13.5- Արտաքին վարկերի գծով մասհանումներ_Տոկոսավճարների կապիտալիզացիա
Տիրույթ	ՊՊ- Պարտքի կառավարման ենթամոդուլ, Գանձապետական մոդուլ, Հանրային հատվածի հաշվապահության մոդուլ
Դերակատարներ	ՊՊԿՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	Գ24
Ելքային տվյալներ	ՊՊ2

### Փուլ 3 – Մարում և սպասարկում

Մարման և սպասարկման փուլին վերաբերող գործընթացները նմանատիպ են բոլոր տեսակի պարտքային գործիքների համար: Ուստի, ներկայացվող օպտիմալացման տարբերակը վերաբերելու է բոլոր տեսակի մարման և սպասարկման գործընթացներին:

Առանձին պարտատոմսերի ԱՄՏԾ (ISIN) կոդերի, վարկերի կամ ՄՖԿ պարտավորությունների մարման համար ժամանակացույցերի ստեղծման և աշխատանքային օրերի կամ որևէ այլ փոփոխության դեպքում գործընթացը նախատեսվում է իրականացնել Պետական պարտքի մոդուլում, որից հետո տվյալները կփոխանցվեն Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլ՝ տվյալ օրվա համար ըստ ժամանակացույցի նախատեսված վճարումներն իրականացնելու համար:

Առաջարկվող օպտիմալացվող գործընթացները կիրականացվեն Պարտքի կառավարման ենթամոդուլում, որի պրոցեսային դիագրամը ներկայացված է նկար 3.8-ում:



Նկար 3.8. Մարման և սպասարկման փուլի օպտիմալացման գործընթացի դիագրամ

Նպատակ	Մարման և սպասարկման փուլի ավտոմատացման ապահովում՝ ժամանակացույցերի կազմում, շտկումների իրականացում ըստ աշխատանքային օրերի և այլն
Նկարագրություն/ ընթացք	Առանձին պարտատոմսերի ԱՄՏԾ (ISIN) կոդերի, վարկերի կամ ՄՖԿ պարտավորությունների մարման համար ժամանակացույցերի ստեղծումից հետո նախատեսվում է դրանց գենեցում ըստ որոշակի տրամաբանության՝ օրական, ամսական, եռամսյակային և այլ կտրվածքով: Աշխատանքային օրերի կամ որևէ այլ փոփոխության դեպքում պարտքային գործիքների պայմանագրերը (ՊՊԶ) կթարմացվեն և կուղարկվեն Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլ՝ տվյալ օրվա համար ըստ ժամանակացույցի նախատեսված վճարումներն իրականացնելու համար:

	Ժամանակացույցերում ձեռքով ուղղումներ կատարելու անհրաժեշտության դեպքում ՊՊԿՎ լիազորված աշխատակցի կողմից կիրականացվի ժամանակացույցի ուղղում և թարմացված ժամանակացույցը ևս կուղարկվի Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլ՝ նախատեսված վճարումներն իրականացնելու համար:
Հղում առկա գործընթացին	Պ9- Պետական գանձապետական պարտատոմսերի մարում և սպասարկում Պ15- Արտարժութային պարտքի մարում և սպասարկում Պ19- Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցություն
Տիրույթ	ՊՊ- Պարտքի կառավարման ենթամոդուլ, Գանձապետական մոդուլ, Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլ
Դերակատարներ	ՊՊԿՎ աշխատակից
Մուտքային տվյալներ	ԳՁ4
Ելքային տվյալներ	ՊՊ2

### 3.3 Առաջնային գործակալների վարքագծի գնահատում

ՊՊԿՎ-ն վարում է առաջնային գործակալների վարքագծի տվյալներ, որը թույլ է տալիս սահմանել այն գործակալների ցանկը, որոնք հնարավորություն են ստանում մասնակցել պետական պարտատոմսերի աճուրդներին տվյալ տարվա համար: Նշված ցանկը վարելու համար ՊՊԿՎ-ն օգտվում է մի քանի տվյալներից.


- ✓ **Հայաստանի ֆոնդային բորսայից՝** առաջնային շուկայում գործակալի ակտիվությունը բնութագրող ցուցանիշ, ինչպես նաև Գործակալների գնանշումների կանոնների խախտումներ,
- ✓ **ՀՀ կենտրոնական բանկից եռամսյակային գնահատականներ՝** երկրորդային շուկայում պոտենցիալ մասնակիցների ակտիվությունը բնութագրող ցուցանիշ,
- ✓ **ՊՊԿՎ-ի կողմից** աճուրդների ընթացքում ձևավորված սուբյեկտիվ գնահատականներ:

Ներկայումս առաջնային գործակալների վարքագծի գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ. ընթացիկ տարվա ընթացքում մշակվում են վերը ներկայացված տվյալները՝ ստանալով **պոտենցիալ մասնակիցների** ցանկը, իսկ տարեվերջում՝ մշակված տվյալների

հիման վրա, սահմանվում է հաջորդ տարվա **առաջնային գործակալների ցանկը**: Ցանկը սահմանվում է հետևյալ կերպ. պոտենցիալ մասնակիցների շարքում ամենաշատ միավորներ հավաքած մասնակիցն ընդգրկվում է հաջորդ տարվա առաջնային գործակալների ցանկում, իսկ ընթացիկ առաջնային գործակալը, որը գտնվում էր ընթացիկ ցանկի վերջին տեղում՝ լքում է ցանկը: Ընդ որում, կարևոր չէ հավաքած միավորների քանակը: Գնահատումն իրականացվում է և՛ ընթացիկ առաջնային գործակալների համար, և՛ ցանկում չգտնվող՝ պոտենցիալ մասնակիցների համար: Հարկ է նշել, որ գնահատման սկզբունքն այս երկու տեսակի դեպքերի համար փոքր-ինչ տարբերվող է:

Ցանկը չպետք է փոքր լինի 5 մասնակցից և առավել չլինի՝ 7-ից: Եթե ընթացիկ տարվա առաջնային գործակալների թիվը 5 է և չկա նոր պոտենցիալ մասնակից, ապա ցանկը մնում է անփոփոխ:

Տարբեր գործիքների կիրառությունը բերում է գործընթացների ոչ օպտիմալ կազմակերպման, ինչպես նաև տվյալների ոչ կենտրոնացված մշակման: Սրանք էլ, իրենց հերթին, կարող են առաջացնել աշխատանքային գործընթացների խափանումներ, զգայուն տվյալների ոչ անվտանգ կիրառություն, տվյալների անհամատեղելիություն և այլն:



Նկար 3.9. Առաջնային գործակալների վարքագծի գնահատման գործառնությունի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Առաջնային գործակալների վարքագծի տվյալների վարում՝ տվյալ տարվա համար պետական գանձապետական պարտատոմսերի աճուրդներին մասնակցելու հնարավորության ընձեռում՝ գործակալների ցանկի սահմանում
--------	---




<p>Նկարագրություն/ ընթացք</p>	<p>Առաջնային գործակալների վարքագծի գնահատման և առաջնային գործակալների և պոտենցիալ մասնակիցների ռեեստրը վարելու գործառնությունը ավտոմատացնելու համար նախատեսվում է առանձին ենթամոդուլ՝ Գործակալների ռեեստրը:</p> <p>ՊՊԿՎ աշխատակիցները պարբերաբար (ամեն եռամսյակ կամ կիսամյակ) իրականացնում են առաջնային գործակալների վարքագծի գնահատում: ՊՊԿՎ լիազորված աշխատակիցը Համակարգ է մուտքագրելու ՊՊԿՎ սուբյեկտիվ գնահատականները, իսկ աճուրդի ենթամոդուլից և ՀՀ ԿԲ-ից կստացվեն համապատասխանաբար աճուրդում մասնակցած գործակալների (գործակալների առաջնային) տվյալներ (ՊՊ6) և երկրորդական շուկայում դրսևորած ակտիվության ցուցանիշները (ԿԲ3), ինչը հնարավորություն կտա ավտոմատացնել գործառնությունը՝ ապահովելով ՊՊԿՎ աշխատակիցների աշխատանքը մեկ համակարգի շրջանակում: Ստացված տվյալների հիման վրա տեղի կունենա ցանկերի վերահաշվարկ և պահպանում՝ համաձայն կարգի (տարվա վերջին ամփոփումը սահմանում է հաջորդ տարվա առաջնային գործակալների և պոտենցիալ մասնակիցների ցանկերը):</p> <p>Այնուհետև, աճուրդի ենթամոդուլում աճուրդի կազմակերպման և իրականացման նպատակով Գործակալների ռեեստրը Աճուրդի ենթամոդուլին կտրամադրի աճուրդի գործընթացում առաջնային գործակալների վերաբերյալ տեղեկատվությունը, նրանց՝ աճուրդին մասնակցելու թույլտվությունները, և նմանատիպ այլ տեղեկատվություն առաջնային գործակալների վերաբերյալ (ՊՊ5) և աճուրդին մասնակցելու հնարավորություն կստանան միայն առաջնային գործակալների ցանկում ընդգրկվածները:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>Պ29– Առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատում</p>
<p>Տիրույթ</p>	<p>ՊՊ-Գործակալների ռեեստրի ենթամոդուլ, ԿԲ համակարգեր</p>
<p>Դերակատարներ</p>	<p>ՊՊԿՎ աշխատակից</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	<p>ԿԲ3, ՊՊ6</p>
<p>Ելքային տվյալներ</p>	<p>ՊՊ5</p>

## Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլ

Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման մոդուլը նախատեսված է հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրման, մարման, բյուջետային երաշխիքների, վարկերի, ենթավարկերի տրամադրման դրանցով ծագած պարտավորությունների ինչպես նաև ՀՀ հանդեպ ոչ ռեզիդենտների (Վրաստանի) պարտքի սպասարկման և կառավարման գործընթացների ապահովման համար:

### 3.4 Հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրում

Հասարակ և փոխանցելի մուրհակների ֆունկցիոնալ նկարագրության համար ընտրվել է նույնաբնույթ գործառույթները մեկ համընդհանուր գործընթացով ներկայացնելու սկզբունքը: Այս սկզբունքը կիրառվում է նաև գործընթացների օպտիմալ տարբերակները ներկայացնելիս: Գործընթացները իրականացնելու են Բյուջեի Նկատմամբ Պարտավորությունների Կառավարման մոդուլի միջոցով: Մասնավորապես որպես օպտիմալացում առաջարկվում է, որ հասարակ և փոխանցելի մուրհակներ տրամադրման որոշումը ՊԲՆՊԿՎ ստանա Իրավաբանական վարչության դրական եզրակացության հետ միասին (փոխանցելի մուրհակների մասով Անալիտիկ Հաշվետվողական Մոդուլի կողմից հաշվանցման հնարավորության ստուգումից հետո):




Նկար 3.10 Մուրհակների տրամադրման գործառույթի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրում և հաշվառում
Նկարագրություն/ ընթացք	Մուրհակների տրամադրման գործընթացը մոդուլի շրջանակում՝ <ul style="list-style-type: none"> <li>• ՖՆ աշխատակցը մուտքագրում է տվյալներ. մուրհակի տեսակ, գումար, ստացող և այլն: Կատարում է հարցում վճռով ծագած պարտավորության հաշվանցման հնարավորության առկայության ստուգման համար</li> <li>• Իրավաբանը ստացված տվյալների հիման վրա տրամադրում է եզրակացություն. բացասական եզրակացության դեպքում հայտը մերժվում է, դրականի դեպքում անցնում հաջորդ փուլ</li> <li>• ՊԲՆՊՎ հաստատում է վավերապայմանները և իրականացնում է մուրհակի տպագրման, հանձման և հաշվառման աշխատանքներ</li> </ul>
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ՊԿՎ1 Հասարակ մուրհակի տրամադրում ԳԶ-ՊԿՎ2 Փոխանցելի մուրհակների տրամադրում
Տիրույթ	Մուրհակներ ենթամոդուլ, ՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ աշխատակից, Իրավաբան, ՊԲՆՊՎ
Մուտքային տվյալներ	ԳԶ6, ՊԵԿ2
Ելքային տվյալներ	ԲՊ2

### 3.5 Վարկերի, ենթավարկերի տրամադրում և բյուջեի նկատմամբ պարտքի կառավարում

Վարկերի, ենթավարկերի տրամադրման և բյուջեի նկատմամբ պարտքի կառավարման գործառույթը իրականացվում է Վարկեր և պարտքեր ենթամոդուլի միջոցով: Վարկերի և ենթավարկերի տրամադրմամբ պայամանաորված պարտավորությունների սպասարկումը և կառավարումը նման են ՀՀ հանդեպ ոչ ռեզիդենտների (Վրաստանի) պարտքի սպասարկման և կառավարման գործառույթին ուստի դրանք իրականացվելու են նույն ենթամոդուլի շրջանակում:




Նկար 3.11 Վարկերի, ենթավարկերի տրամադրման գործառնության օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Վարկերի, ենթավարկերի տրամադրում և բյուջեի նկատմամբ պարտքի կառավարում
Նկարագրություն/ ընթացք	<p>Վարկերի և ենթավարկերի տրամադրման գործընթացը մոդուլի շրջանակում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՖՆ աշխատակցը մուտքագրում է տվյալներ, դիմող ընկերության ակտիվներ, պասիվներ, պարտավորություններ, դրամական հոսքեր</li> <li>• ՊԲՆՊՎ տրամադրում է եզրակացություն. դրական եզրակացությունից հետո կազմվում է որոշման նախագծի և տրամադրվում շահագրգիռ մարմինների և այլ կազմակերպությունների առաջարկների և դիտողությունների համար</li> <li>• Լրամշակված է որոշման հաստատման դեպքում իրականացնում է վարկի կամ ենթավարկի տրամադրում և հաշվառում</li> </ul>
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ՊԿԿ5 Բյուջետային վարկերի և ենթավարկերի տրամադրում

Տիրույթ	Վարկեր և պարտքեր ենթամոդուլ, ՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ աշխատակից, ՊԲՆՊՎ, Շահագրգիռ մարմիններ և այլ կազմակերպություններ
Մուտքային տվյալներ	ԳՁ6
Ելքային տվյալներ	ԲՊ2

### 3.6 Բյուջետային երաշխիքների տրամադրում

Բյուջետային երաշխիքների տրամադրման գործառույթը ավտոմատացնելու համար նախատեսվում է առանձին Բյուջետային երաշխիքներ ենթամոդուլ, որով էլ իրականացվելու են Բյուջետային երաշխիքների տրամադրման, հաշվառման և պարտավորությունների կառավարման գործառույթները:



Նկար 3.12 Բյուջետային երաշխիքների տրամադրման գործառույթի օպտիմալացման դիագրամ

Նպատակ	Բյուջետային երաշխիքների տրամադրում և հաշվառում
Նկարագրություն/ ընթացք	<p>Բյուջետային երաշխիքների տրամադրման գործընթացը մոդուլի շրջանակում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՖՆ աշխատակցը մուտքագրում է տվյալներ. ընկերության ակտիվներ, պասիվներ, պարտավորություններ, կանխիկ դրամական հոսքեր</li> <li>• ՊԲՆՊՎ տրամադրում է եզրակացություն. դրական եզրակացությունից հետո կազմվում է որոշման նախագծ և տրամադրվում շահագրգիռ մարմիններ և այլ ստորաբաժանումներ առաջարկների և դիտողությունների համար</li> <li>• Լրամշակված որոշուման հաստատման դեպքում իրականացվում է Բյուջետային երաշխիքի տրամադրում և հաշվառում</li> </ul>
Հղում առկա գործընթացին	ԳԶ-ՊԿՎ6 Բյուջետային երաշխիքների տրամադրում
Տիրույթ	Բյուջետային երաշխիքներ ենթամոդուլ, ՀՀՀ մոդուլ
Դերակատարներ	ՀՀ ՖՆ աշխատակից, ՊԲՆՊՎ, Շահագրգիռ մարմիններ և այլ ստորաբաժանումներ
Մուտքային տվյալներ	ԳԶ6
Ելքային տվյալներ	ՊԲ2

## Հավելված 1. ՊՊԿՎ գործառույթներ

1. Պարտքի ներգրավում
1.1. Ռազմավարություն մշակում
1.1.1. Պարտքի ներգրավման միջնաժամկետ ռազմավարության մշակում
1.1.2. ՄԺԾԾ հայտեր
1.1.3. Տարեկան բյուջետային հայտեր
1.2. Ռազմավարություն իրականացում
1.2.1. Փոխառությունների տարեկան ծրագրի մշակում
1.2.2. Պետական գանձապետական պարտատոմսեր
1.2.2.1. Թողարկում
1.2.2.1.1. Պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) թողարկում
1.2.2.1.2. Պետական միջնաժամկետ (ՄԺՊ) և երկարաժամկետ (ԵԺՊ) արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում
1.2.2.1.3. Պետական ինայոդական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում
1.2.2.2. Տեղաբաշխում և հետզնում
1.2.2.2.1. Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդ
1.2.2.2.2. Գանձապետական պահառուի առցանց եղանակով (online) պարտատոմսերի մանրաձախ վաճառք
1.2.2.2.3. Գանձապետական պահառուի սպասարկման կետերի միջոցով պարտատոմսերի մանրաձախ վաճառք
1.2.2.2.4. Պետական գանձապետական պարտատոմսերի հետզնման աճուրդ
1.2.2.3. Առաջնային գործակալների վարքագծի գնահատում
1.2.3. Պետական արտարժույթային պարտատոմսեր



1.2.4. Վարկեր
1.2.5. Երաշխիքներ
1.3. Պարտքի հաշվառում և սպասարկում
1.3.1. Պարտքային գործիքների գրանցում
1.3.1.1. ՊԳՊ գրանցում
1.3.1.2. Վարկերի գրանցում
1.3.1.3. Արտարժույթային պարտատոմսերի թողարկման գրանցում
1.3.1.4. Երաշխիքների գրանցում
1.3.2. Պարտքի ներգրավման գործիքների հաշվառում
1.3.2.1. ՊԳՊ-երի (նաև ԽԱՊ-երի) տեղաբաշխումների և հետգնումների գրանցում
1.3.2.2. Վարկային միջոցների մասհանումներ
1.3.2.2.1. Արտաքին վարկերի գծով մասհանումներ - Հատուկ հաշիվ և փոխհատուցում
1.3.2.2.2. Արտաքին վարկերի գծով մասհանումներ - Բյուջետային աջակցություն
1.3.2.2.3. Արտաքին վարկերի գծով մասհանումներ - Ուղղակի վճարում
1.3.2.2.4. Արտաքին վարկերի գծով մասհանումներ - Վարկավորման պայմանների ամրագրում
1.3.2.2.5. Արտաքին վարկերի գծով մասհանումներ - Տոկոսավճարների կապիտալիզացիա
1.3.2.3. Արտարժույթային պարտատոմսերի տեղաբաշխման/հետգնման գրանցում
1.3.2.4. Երաշխիքների գրանցում
1.3.3. Պարտքի մարում և սպասարկում
1.3.3.1. ՊԳՊ-երի (նաև ԽԱՊ-երի) մարում և սպասարկում

1.3.3.2. Արտարժույթային պարտքի մարում և սպասարկում
1.4. Վիճակագրություն և հաշվետվություն
1.4.1. Պետական պարտքի տարեկան հաշվետվության պատրաստում և հրապարակում
1.4.2. Ամսական վիճակագրական տեղեկագրերի պատրաստում
1.4.3. Այլ հաշվետվություններ
1.4.3.1. ՀՀ ՖՆ 28.12.2020թ. N 426-L հրամանի հաշվետվությունների պատրաստում
<b>2. Կանխիկ հոսքեր</b>
2.1. Կանխիկ հոսքերի կանխատեսում
2.1.1. ՀՀ պետական բյուջեի կանխիկ հոսքերի ամսական ցուցանիշների կանխատեսում (առանց ԾԻԳ)
2.1.2. ՀՀ պետական բյուջեի կանխիկ հոսքերի օրական ցուցանիշների կանխատեսում (առանց ԾԻԳ)
2.1.3. ՀՀ պետական բյուջեի կանխիկ հոսքերի ամսական ցուցանիշների կանխատեսում (ԾԻԳ-ով)
2.1.4. ՀՀ ԳՄՀ հոսքերի օրական ցուցանիշների կանխատեսում (ԾԻԳ-ով)
2.2. Կանխիկ հոսքերի կառավարում
2.2.1. ԳՄՀ ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրում ՀՀ ԿԲ-ում
2.2.2. ՀՀ կենտրոնական բանկում ներդրված ավանդի վաղաժամկետ մարում
<b>3. Այլ գործառույթներ</b>
3.1. ՀՀ հանդեպ ոչ ռեզիդենտների (Վրաստանի) պարտքի սպասարկում
3.2. Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարում

## Հավելված 2. ՊԲՆՊԿՎ գործառույթներ

1. Բյուջետային երաշխիքների տրամադրում
1.1 Բյուջետային երաշխիքի տրամադրում
1.2 Ժամկետանց պարտավորությունների գծով ծանուցումների ներկայացում երաշխավորված անձանց
1.3 Պարտավորությունների չմարման դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխիքային պարտավորության մարում
1.4 ՀՀ պետական բյուջեից պարտավորության մարման դեպքում պարտավորության որպես վարկ ձևակերպման գործընթացներ
2. Բյուջետային վարկերի և ենթավարկերի տրամադրում
2.1 Բյուջետային վարկի և ենթավարկի տրամադրում
2.2 Ժամկետանց պարտավորությունների գծով ծանուցումների ներկայացում
2.3 Ժամկետանց պարտավորությունների չմարման դեպքում բռնագանձման գործընթաց
3. Հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրում
3.1 Հասարակ և փոխանցելի մուրհակների տրամադրում
3.2 Փոխանցելի մուրհակների պահանջի իրավունքի զիջմաբ պայմանավորված մուրհակատիրոջ փոփոխություն
3.3 Հասարակ և փոխանցելի մուրհակների մարում